

**Ամուլսարի ոսկու ծրագրի «Բնապահպանական և սոցիալական ազդեցության
գնահատում» (ԲՄԱԳ) փաստաթղթում նոր հանգամանքների մասին
հաշվետվություն**

Անդրեյ Կովաչով (kovatchev6@gmail.com), Ելենա Ցինգարսկա-Սեդեֆչևա
(elena@balkani.org), Անդրեյ Ռալև (alibotush@gmail.com)

Վայրի բնության բալկանյան միություն, Բուլղարիա www.balkani.org

2018թ. նոյեմբեր



Ամուլսարի ոսկու նախագիծ, 3.10.2018թ.

Բովանդակություն

Ներածություն՝ էջ 3

Մեթոդաբանություն՝ էջ 5

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բեռնի կոնվենցիայի համաձայն՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի ազդեցությունների՝ բացակայող գնահատականը՝ էջ 4

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 2. ԲՍԱԳ-ում օգտագործվում են մեթոդաբանություններ, որոնք չեն արտացոլում Բեռնի կոնվենցիայի դրույթները և անհամատեղելի են Էմերալդ ցանցի հետ՝ էջ 12

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 3. հնարավոր ազդեցությունները «Ջերմուկ տարածք» AM0000009 բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքի (այսուհետ՝ ԲՀՀՏ) տվյալների ստանդարտ ձևաչափում ներառված տեսակների և բնակմիջավայրերի վրա՝ էջ 15

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 4. հնարավոր ազդեցություններ պաշտպանված այլ տեսակների և բնակմիջավայրերի վրա՝ էջ 25

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 5. Արվա գետի աղտոտումը և ջրային էկոհամակարգերի համար հնարավոր սպառնալիքները՝ էջ 35

Ներածություն

Սույն փաստաթուղթը Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) քննադատական վերլուծությունն է կենսաբազմազանության մասով: Այն ներկայացնում է նոր հանգամանքներ, ինչը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի վերսկսում: Սույն վերլուծությունը պատրաստվել է «Վայրի բնության բալկանյան միություն» ՀԿ-ի փորձագետների կողմից (Բուլղարիա) «CEE Bankwatch Network»-ի և «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի խնդրանքով և աջակցությամբ, Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի¹ երրորդ գլխի իրականացմանն (Շրջակա միջավայրը) աջակցելու նպատակով: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 45-րդ հոդվածի համաձայն՝

«Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն շրջակա միջավայրին առնչվող հարցերի մասով իրենց համագործակցությունը՝ դրանով նպաստելով կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի ապահովմանը: Ակնկալվում է, որ շրջակա միջավայրի ընդլայնված պաշտպանությունից կշահեն Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ու գործարարությունը, այդ թվում՝ հանրային առողջության բարելավման, բնական պաշարների պահպանման եւ տնտեսական ու բնապահպանական արդյունավետության բարելավման, ինչպես նաև՝ առավել կայուն արտադրության կառուցվածքների ապահովմանը նպաստող ժամանակակից, ավելի մաքուր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով»:

Մեթոդաբանություն

Սույն փաստաթուղթը մշակվել է երեք փուլով՝

Փուլ 1. Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի ԲՄԱԳ-ի՝ կենսաբանությանն առնչվող գլուխների և համատեքստի ուսումնասիրություն: Հատուկ ուշադրություն է դարձվել առանցքային տվյալների ուսումնասիրությանը, կենսաբազմազանության ազդեցության գնահատմանը և առաջարկվող միջոցառումներին՝ համաձայն մեղմացման հիերարխիայի (խուսափում, մեղմացում, փոխհատուցում): Գնահատվել են օգտագործված մեթոդաբանությունները, տվյալներում առկա բացերն ու

¹ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=JOIN:2017:0036:FIN>

անհամապատասխանությունները: Նախնական այցելություններ են կատարվել Վայոց ձորի և Սյունիքի մարզեր:

Ժամանակահատվածը՝ 15 հուլիս 2018թ. – 30 սեպտեմբեր 2018թ.:

Փուլ 2. Դաշտային հետազոտություններ Ամուլսար սարում, «Ջերմուկ» ազգային պարկի նախատեսվող տարածքում և Էմերալդի տարածքներում ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում: Փորձագետները բաժանվել են երեք խմբի և կիրառել են տարբեր հետազոտական մեթոդներ՝ կախված լանդշաֆտից՝ տարածքների ոտքով անցում, ամենագնաց մեքենաներով անցում, ֆիքսված դիտակետեր: Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում ներառված բոլոր դիտարկված տեսակները և 4-րդ բանաձևում ներառված բոլոր բնակմիջավայրերը նկարագրվել են GPS կոորդինատներով և ֆոտոններով: Նաև նկարագրվել են Ամուլսարի ոսկու նախագծի՝ դիտարկված բոլոր և հնարավոր ազդեցությունները: Դաշտային հետազոտությունները լրամշակվել են հայկական ՀԿ-ների, կենսաբազմազանության փորձագետների, իշխանության համապատասխան մարմինների և տեղացիների հետ հանդիպումներից ստացված տվյալներով: Տեղացիների շրջանում անցկացվել են հարցումներ՝ խոշոր կաթնասուն կենդանիների և թռչնատեսակների առկայության մասին:

Ժամանակահատված՝ 1 հոկտեմբեր 2018թ. – 6 հոկտեմբեր 2018թ.

Փուլ 3. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) առնչությամբ նոր հանգամանքների մասին հաշվետվության պատրաստում: Հաշվետվությունը պատրաստվել է՝ վերլուծելով հավաքված տեղեկատվությունը, լրացնելով տեղեկատվության բացերը և կապ պահպանելով շահառուների հետ:

Ժամանակահատված՝ 7 հոկտեմբեր 2018թ. – 7 նոյեմբեր 2018թ.:

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բեռնի կոնվենցիայի համաձայն՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի ազդեցությունների՝ բացակայող գնահատականը

«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիան՝ Եվրոպայի խորհրդի №104 դաշնագիրը (Բեռնի կոնվենցիա), վավերացվել է Հայաստանի կողմից 2008թ. ապրիլի 14-ին և ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսի 1-ից²:

Կոնվենցիան պարտավորեցնող միջազգային իրավական գործիք է բնապահ պանության ոլորտում: Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողովի 16-րդ բանաձևի (1989թ.) և 3-րդ բանաձևի համաձայն³ սկսվեց «ԷՄԵՐԱԼԴ ցանց»-ի ստեղծումը, որը բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածք է (ԲՀՀՏ)՝ նախատեսված պահպանելու վտանգված բնական միջավայրերը (թվարկված Կոնվենցիայի մշտական հանձնաժողովի 4-րդ բանաձևում (1996թ.)) և տեսակները (թվարկված Կոնվենցիայի մշտական հանձնաժողովի 6-րդ բանաձևում (1998թ.):

2015թ. հոկտեմբերին Հայաստանն առաջարկեց ստեղծել «Ջերմուկ» ԲՀՀՏ-ն՝ 35,015 հեկտար տարածքով⁴: Հաջորդ տարի դեկտեմբերին Հայաստանն առաջարկեց ստեղծել մեկ այլ ԲՀՀՏ՝ «Գորայք»-ը՝ 4056.7 հա տարածքով⁵:

Երկու տեղանքներն էլ ընտրվել են փորձագիտական եզրակացություններից հետո՝ 2015թ. մայիսի 27-29-ին Թբիլիսիում Բեռնի կոնվենցիայի՝ Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի համար անցկացրած սեմինարից հետո⁶: 2017թ. նոյեմբերի 8-9-ին Թբիլիսիում տեղի ունեցած երկրորդ կենսաաշխարհագրական սեմինարից հետո երկու տեղանքներն էլ ստացել են ԲՀՀՏ-ի թեկնածուի կարգավիճակ⁷:

Երկու ԲՀՀՏ-ների և Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի՝ 2016թ. մայիսի 17-ի (տես սխեմատիկ պլանը ստորև)⁸ ԲՄԱԳ-ով առաջարկվող սահմանները համեմատելիս, մենք հայտնաբերեցինք, որ

- **Ամուլսարի ոսկու նախագծի պլանավորված տարածքի զգալի մասը գտնվում է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ ներսում**, մասնավորապես՝ այս տարածքի ներսում են գտնվում ոսկու հանքի հետևյալ մասերը՝ դատարկ

² https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/104/signatures?p_auth=864D7ApJ

³ <https://www.coe.int/en/web/bern-convention/documents1>

⁴ <http://natura2000.eea.europa.eu/Emerald/SDF.aspx?site=AM0000009&release=2>

⁵ <http://natura2000.eea.europa.eu/Emerald/SDF.aspx?site=AM0000013&release=2>

⁶ <https://www.coe.int/en/web/bern-convention/-/emerald-biogeographical-evaluation-seminar-for-armenia-azerbaijan-and-georgia>

⁷ <https://www.coe.int/en/web/bern-convention/-/emerald-network-evaluation-semin-1>

⁸ ԲՄԱԳ

<https://www.lydianinternational.co.uk/projects/amulsar/environmental-and-social-impact-assessment-esia>

<https://www.lydianarmenia.am/index.php?m=publications&lang=eng&p=9>


ապարների լցակույտը, բացահանքի էրատո տեղամասը, տեղափոխման գիծը/սարքը: Կույտային տարրավազման հարթակը գտնվում է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի անմիջական հարևանությամբ՝ Ամուլսարի տեղամասից 50-650 մետր հեռավորության վրա, Արփա կիրճից՝ 250-550 մետր հեռավորության վրա:

- Ամուլսարի ծրագրի բացահանքը, պահեստը, փոխադրման և վերամշակման կառույցները և «**Գորհայք տարածք**» (AM0000013) ԲՀՀՏ-ն չեն համընկնում, բայց նրանց միջև հեռավորությունը 1550-2000 մետր է և պետք չէ բացառել բացասական ազդեցությունները: Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի հարավային մասը (գյուղատնտեսական նշանակությունը կորցրած հողերը) մասամբ գտնվում է «**Գորհայք տարածքում**»:
- Բացի այդ, աղտոտման, ջրի որակի կամ ջրային մարմինների ջրաբանական ռեժիմի վատթարացման դեպքում Ամուլսարի ոսկու հանքը կարող է ազդեցություն թողնել ևս 3 ԲՀՀՏ-ի վրա՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ (AM0000012) (Արփա գետի հոսանքն ի վար), «Տաթև» տարածք (AM0000016) (Որոտան գետի հոսանքն ի վար) և «Սևան» ազգային պարկ (AM0000002) (Կեչուտի ջրամբարից ջուրը հոսում է դեպի Սևանա լիճ)⁹:
- «**Ջերմուկ տարածք**»-ը պաշտոնապես առաջադրվել է որպես ԲՀՀՏ ավելի քան վեց ամիս առաջ՝ նախքան Ամուլսարի նախագծի ԲՄԱԳ-ի գեկույցի ավարտը, 2016թ. Մայիսին, և Ամուլսարի՝ 2016թ. ապրիլին փոփոխված նախագծի ՇՄԱԳ-ի նոր եզրակացություն ստանալը,¹⁰ իսկ «**Տաթև տարածք**» (AM0000016)՝ 8 ամիս առաջ, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը (AM0000001)՝ 2.5 տարի առաջ, «Սևան» ազգային պարկը (AM0000002)՝ ութ տարի առաջ: «**Գորհայք տարածք**» (AM0000013) առաջադրվել է որպես ԲՀՀՏ Ամուլսարի ոսկու նախագծի ԲՄԱԳ-ի ավարտից և փոփոխված նախագծի ՇՄԱԳ-ի նոր

⁹ <http://emerald.eea.europa.eu/>

¹⁰ Էջ 1.12, ԲՄԱԳ-ի «1.4.1 Յայ կակ ան ծՄԱԳ» գլ ու խ

բնապահպանական եզրակացություն ստանալուց վեց ամիս հետո:



ԲՀՀՏ-ում Ամուլսարի ոսկու նախագծի տարածքի գտնվելը և հնարավոր ազդեցությունները այլ ԲՀՀՏ-ների վրա առաջացնում է կարևոր իրավական հետևանքներ առ 2016թ. ապրիլը, երբ տրվել է փոփոխված նախագծի ՇՄԱԳ-ի նոր եզրակացությունը (տես հղման կետ 9): Կոնվենցիայի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ (բ) և 9-րդ հոդվածների համաձայն՝ 1-ին բանաձևի (1989թ.) 1-3 պարագրաֆների, 14-րդ բանաձևի (1989թ.), 16-րդ բանաձևի (1989թ.), 3-րդ բանաձևի (1996թ.), 4-րդ բանաձևի (1996թ.), 5-րդ բանաձևի (1998թ.) 2-րդ և 4-րդ հոդվածների, 6-րդ բանաձևի (1998թ.), 157-րդ բանաձևի (2011թ.) 1-ին պարագրաֆի և 8-րդ բանաձևի (2012թ.) 1-2 պարագրաֆների և 2011-2020թթ. (2015թ.)¹¹ Էմերալդ ցանցի իրականացման օրացույցի համաձայն, որոնք՝ բոլորը, ընդունվել են մշտական հանձնաժողովի կողմից 14-րդ հոդվածի հենքով՝ ՀՀ-ն պատասխանատու է հետևյալի համար՝

1. բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների (ԲՀՀՏ) ցանցի՝ «Էմերալդ ցանցի» նշանակում՝ 16-րդ (1989թ.) բանաձևով սահմանված օբյեկտիվ չափորոշիչների համաձայն:
2. Թեկնածու ԲՀՀՏ-ները պետք է նաև նշանակվեն կառավարությունների կողմից՝ ազգային օրենսդրության միջոցով կամ այլ եղանակով: Հայաստանի դեպքում, գնահատման և նշանակման բոլոր ընթացակարգերի ավարտը նախանշվել է 2014թ.:
3. Ապահովել, որ բոլոր համապատասխան և անհրաժեշտ վարչական միջոցները

¹¹ <https://www.coe.int/en/web/bern-convention/documents1>

https://pjp-eu.coe.int/documents/1461016/4159207/pa02e_2014_Explanatory_document_relevanttexts_+Emerald.pdf/56a73276-1988-4676-8f44-4e97dd433d85

ձեռնարկվեն ԲՀՀՏ-ներում վայրի բնության կենդանական և բուսական աշխարհների տեսակների բնակավայրերը և պաշտպանության ներքո գտնվող վտանգված բնական միջավայրերը պահպանելու նպատակով (տվյալ ԲՀՀՏ-ում առկա բոլոր տեսակները և բնական միջավայրերը թվարկված են 4-րդ և 6-րդ բանաձևերում): Քաղաքականությունները պլանավորելիս կամ մշակելիս՝ Հայաստանը պետք է խուսափի կամ հնարավորինս նվազագույնի հասցնի ԲՀՀՏ-ների վիճակի ցանկացած վատթարացում: Պահպանություն իրականացնելը նշանակում է բնական միջավայրերի ոչ կենսունակ և կենսունակ առանձնահատկությունների պահպանում և վերականգնում, կամ բարելավում, և, հնարավորության դեպքում, այն գործողությունների վերահսկողություն, որոնք կարող են անուղղակիորեն հանգեցնել որևէ վատթարացման:

4. Հաշվի առնելով վերոնշյալ պարտավորությունները՝ Հայաստանը պետք է ձեռնարկի պաշտպանությանն և պահպանմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ «Էմերալդ ցանց»-ի թեկնածուի (ԲՀՀՏ-ներ) էկոլոգիական բնութագրիչները պահպանելու համար:
5. ԲՀՀՏ-ի պաշտպանությանն ուղղված համապատասխան և անհրաժեշտ քայլեր չձեռնարկելը (Կոնվենցիայի 9-րդ հոդված) կարող է արդարացվել միայն այն դեպքում, եթե առկա չէ այլ գոհացուցիչ լուծում, և եթե այդ բացառությունը վտանգ չի ներկայացնի տվյալ պոպուլյացիայի գոյատևման համար, և եթե տվյալ որոշման կապակցությամբ առկա է հետևյալ հանգամանքներից որևէ մեկը՝ բացառությունն արվում է՝ ելնելով հասարակության առողջության և անվտանգության, օդի անվտանգության և այլ առաջնահերթ հանրային շահերից, հացահատիկային կուլտուրաներին, ընտանի կենդանիներին, անտառին, ձկնատեսակներին և տնտեսության այլ ձևերին հասցվելիք լուրջ վնասը կանխելու նպատակով, հետազոտական և կրթական աշխատանքների, պոպուլյացիայի վերականգնման, վերարտադրման և բազմացման նպատակով,
6. Հայաստանը նաև պետք է նույնականացնի իր տարածքում առկա վտանգված տեսակները, որոնց համար անհրաժեշտ է վերականգնման պլաններ, և մշակի ու իրականացնի նմանատիպ պլաններ,
7. Հայաստանը պետք է նախաձեռնի նշանակված ԲՀՀՏ-ների տեսակների և բնակմիջավայրերի պահպանման կարգավիճակի վերահսկում և պետք է Կոնվենցիայի քարտուղարությանը տեղեկացնի ցանկացած կարևոր փոփոխությունների մասին, որոնք, հավանաբար, էական բացասական ազդեցություն կթողնեն նշանակված ԲՀՀՏ-ի էկոլոգիական բնույթի վրա և նշանակումն ապահովող պայմանների վրա:

Քննարկելով վերոնշյալ բոլոր դրույթները և հանգամանքները՝ իրականացրել ենք Ամուլսարի ոսկու հանքի նախագծի ԲՄԱԳ-ի՝ Բեռնի կոնվենցիայի և «Էմերալդ

ցանց»-ի իրականացման քննական վերլուծություն (Lydian International, 2016թ. մայիս, և ՇՄԱԳ գործընթացի ավարտը ՀՀ օրենսդրության համաձայն): 2016թ. մայիսի ԲՄԱԳ հաշվետվությունը արտացոլում է ՇՄԱԳ գործընթացի իրականացումը՝ և՛ ազգային, և՛ միջազգային չափորոշիչների համաձայն: ՇՄԱԳ գործընթացն ավարտվել է 2016թ. ապրիլին և ՀՀ բնապահպանության նախարարի 2016թ. ապրիլի 28-ի հրամանով շնորհվել է թույլտվություն՝ փոփոխված ՇՄԱԳ հաշվետվության հիման վրա: Դրական եզրակացություն շնորհվել էր դեռևս 2014թ. հոկտեմբերի 17-ին, սակայն, այնուհետև նախագիծը փոփոխվել էր 2015թ. և 2015թ. նոյեմբերին հրապարակվել էր նախագծի տեխնիկական-տնտեսական նոր հիմնավորումը: Վերլուծությունից հետո հաստատվել են հետևյալ հանգամանքները՝

- Ամուլսարի ոսկու նախագծի ազդեցության ներքո գտնվող «Էմերալդ ցանց», «Էմերալդ ցանց»-ի թեկնածու տարածքները (ԲՀՀՏ-ներ) և «Էմերալդ ցանց»-ին առնչվող Բեռնի կոնվենցիայի իրավական հիմքերը նշված, հղված կամ վերլուծված չեն ԲՄԱԳ-ի որևէ մասում:
- Բեռնի կոնվենցիան մասնավորապես նշված է միայն որպես իրավական ակտ ԲՄԱԳ-ի մեկ գլխում՝ էջ 2.73, երկրորդ գլխում՝ «Իրավական շրջանակ» (2016թ. հունիս, տարբերակ 10), 2.2 ենթագլխում՝ «Միջազգային չափանիշներ և ուղեցույցներ» և 2.2.7 ենթագլխում՝ «Կամավոր օրենսգրքեր և միջազգային բնապահպանական կոնվենցիաներ»: Այս գլխում Բեռնի կոնվենցիային առնչվող կոնկրետ տեքստը հետևյալն է «Աղյուսակ 2.8՝ ՀՀ մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին» և ներառում է հետևյալը՝

	Անվանում, ընդունման վայր և տարեթիվ	Պայմանագիրը ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից	Ուժի մեջ է ՀՀ համար	Նախագծի պահանջներ
15	Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիա (Բեռն, 19.09.1979)	01.01.1982	2006	26.02.2008	01.08.2008	Հաշվի է առնվել կենսաբազմազանության մասին հատվածներում (Գլուխ 4.10 և 6.11)

Սակայն, ԲՄԱԳ հաշվետվության 2.8 աղյուսակի մեջ հղում կատարված գլուխները ստուգելիս (Գլուխ 4.10 և 6.11), պարզվեց, որ 2.8 աղյուսակում նշված տեքստը չի համապատասխանում իրականությանը:

- Ոչ մի հղում առկա չէ և ոչ մի տեղ չի նշվում Բեռնի կոնվենցիայի մասին Գլուխ 6-ում՝ «Հնարավոր ազդեցություններ և մեղմացման միջոցներ» (2016թ. հունիս, տարբերակ 10), 6.11 ենթագլխում «Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր»: Նույնը կարելի է ասել ԲՄԱԳ հաշվետվության բոլոր հատվածների մասին, որտեղ վերլուծվում են կենսաբազմազանության խնդիրները և 6-րդ գլխում ներառված ենթագլուխը՝ «6.22 Ազդեցության գնահատման ամփոփ եզրակացություն»:
- 4-րդ գլխում՝ «Ելակետային տվյալներ», 4.10 ենթագլխում՝ «Կենսաբազմազանություն» (2016թ. հունիս, տարբերակ 10), 4.10.74 էջում առկա է միայն մեկ շատ կարճ հղում Բեռնի կոնվենցիայի մասին, «4.10.10 Ձկների ուսումնասիրություն և արդյունքներ» ենթագլխում գրված է, «Ուսումնասիրությունների ընթացքում դիտարկված տեսակներից ոչ մեկը գրանցված չէ ՀՀ կարմիր գրքում կամ IUCN-ի կարմիր ցանկում: «Nase Chondrostoma nasus»-ն առկա է Բեռնի կոնվենցիայի 3-րդ հավելվածում. «Տեսակներ, որոնց անհրաժեշտ է պաշտպանել, բայց որոնք կարելի է որսալ կամ շահագործել այլ տարբերակով բացառիկ դեպքերում»: Այս տեսակը գրանցված է որպես «նվազագույն վտանգված» ԲՄՄՊ-ի ցանկում:
- Երրորդ և վերջին կարճ հղումը Բեռնի կոնվենցիային ԲՄԱԳ հաշվետվությունում կատարվել է 4-րդ գլխին կցված փաստաթղթում, որը կոչվում է «Ամուլսարի էկոլոգիա՝ «chiroptera»-ի (չղջիկի) ուսումնասիրություն» (օգոստոս 2014թ., Lydian Int Ltd), «Օրենսդրություն և քաղաքականություն» հավելված Բ-ի 3/4 էջում, 1.3.1 կետում՝ «ԵՄ բնակմիջավայրերի մասին դիրեկտիվա»: Սույն հղման մեջ միայն հակիրճ նշված է, որ 92/43 դիրեկտիվան ընդունված է որպես գործիք ԵՄ-ում Բեռնի կոնվենցիայի իրականացման համար:
- Ամբողջ ԲՄԱԳ հաշվետվությունում՝ ներառյալ կենսաբազմազանության հարցերը քննարկող բոլոր գլուխներում և փաստաթղթերում, չկա որևէ այլ հղում Բեռնի կոնվենցիային:

ԲՄԱԳ հաշվետվության հիմնական եզրակացություններն են՝

- «Էմերալդ ցանցը» և Բեռնի կոնվենցիան բավարար ուշադրության չեն արժանացել ԲՄԱԳ հաշվետվության մեջ, և ԲՄԱԳ-ը տեղեկատվություն չի տրամադրել ՀՀ համապատասխան մարմիններին (Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն (ՇՄԱՓԿ) և ՀՀ բնապահպանության նախարարությանը) առ այն, որ այս ծրագիրն ուղղակիորեն ազդում է «Էմերալդ

ցանց»-ի վրա, և հնարավոր են բացասական ազդեցություններ:

- ԲՄՄԳ հաշվետվությունում առկա չէ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի ազդեցությունների գնահատումը «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի էկոլոգիական առանձնահատկությունների վրա և հավանական ազդեցությունները «Գորհայք տարածք»-ի (AM0000013), «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի (AM0000012), «Տաթև տարածքի» (AM0000016) և «Սևան ազգային պարկ» (AM0000002) ԲՀՀՏ-ների վրա: Այսպիսով, վտանգված է ԲՀՀՏ-ներում վայրի բնության կենդանական և բուսական աշխարհների տեսակների բնակավայրերի և պաշտպանության ներքո գտնվող վտանգված բնական միջավայրերի պահպանման նպատակով բոլոր համապատասխան և անհրաժեշտ վարչական միջոցառումների ապահովումը:
- Մասնավորապես, բացակայում է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում ներառված տեսակների և բնակմիջավայրերի գնահատումը, որոնց վրա Ամուլսարի ոսկու նախագիծը կարող է բացասական ազդեցություն ունենալ`
 - **4-րդ բանաձևում նշված բնակմիջավայրեր (1996թ.)** - E1.11 Եվրո-սիբիրական խոտային համակեցություններ քարային փլվածքների վրա, E2.3 Լեռնային խոտհարքային մարգագետիններ, E3. Ենթամիջերկրածովյան խոնավ մարգագետիններ, E3.4 Թաց և խոնավ էվտրոֆ և մեզոտրոֆ խոտային համակեցություններ, E4.3 Ալպյան և մերձալպյան խոտային համակեցություններ թթու հողերի վրա, E5.4 Խոնավ բարձրախոտային կամ պտերային անտառի եզրեր կամ մարգագետիններ, F9.1 Ափամերձ թփուտներ, G1.11 Ափամերձ ուռենու անտառներ, H1 Քարանձավներ, H2.3 Թթվային սիլիցիումային բարեխառն-լեռնային գոտու քարացրոններ, H3.1 Թթվային սիլիցիումային ժայռեր.
 - **6-րդ բանաձևում նշված տեսակներ (1998թ.)**
 - Բույսեր` 4067 *Echium russicum*.
 - Անողնաշարներ` 6199 *Euplagia quadripunctaria*.
 - Չկներ` 1130 *Aspius aspius*; 6168 *Luciobarbus comizo*; 1146 *Sabanejewia aurata*.
 - Թռչուններ` A229 *Alcedo atthis*; A255 *Anthus campestris*; A224 *Caprimulgus europaeus*; A122 *Crex crex*; A429 *Dendrocopos syriacus*; A379 *Emberiza hortulana*; A338 *Lanius collurio*; A339 *Lanius minor*; A246 *Lullula arborea*; A272 *Luscinia svecica*; A346 *Pyrrhocorax pyrrhocorax*; A307 *Sylvia nisoria*; A397 *Tadorna ferruginea*;
 - Կաթնասուններ` 1355 *Lutra lutra*; 1361 *Lynx lynx*; 1354 *Ursus arctos*; 1352 *Canis lupus*; 2635 *Vormela peregusna*; 1372 *Capra aegagrus*; 1307 *Myotis blythii*; 1321 *Myotis emarginatus*; 1305 *Rhinolophus euryale*; 1304

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 2. ԲՄԱԳ հաշվետվությունում օգտագործվում են մեթոդաբանություններ, որոնք չեն արտացոլում Բեռնի կոնվենցիայի դրույթները և անհամատեղելի են «Էմերալդ ցանց»-ի հետ

Ամուլսարի ԲՄԱԳ-ում կիրառվում են մեթոդաբանություններ, որոնք չեն արտահայտում Բեռնի կոնվենցիայի դրույթները և անհամատեղելի են Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների (ԲՀՀՏ) «Էմերալդ ցանց»ի հետ: Հետևաբար, «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի նշանակման նպատակները կարող են վտանգվել Ամուլսարի ոսկու նախագծի իրականացումից հետո: Նմանատիպ խնդրահարույց մեթոդաբանություններն են՝

1. **Այսպես կոչված «կրիտիկական բնակմիջավայրի» սահմանման մեթոդաբանություն**¹²: Այս մեթոդաբանության համաձայն, Էմերալդ ԲՀՀՏ-ի առկայությունը մշտական հանձնաժողովի 16-րդ (1989թ.) բանաձևով չի առնչվում տեղանքի «կրիտիկական բնակմիջավայրի» սահմանման հետ: Սակայն, Բեռնի կոնվենցիայի համաձայն, ԲՀՀՏ-ները այն տարածքներն են, որոնք ընդգրկում են կարևոր և/կամ վտանգված բնակմիջավայրերի տեսակներ, որոնք էականորեն նպաստում են վտանգված տեսակների կամ Կոնվենցիայի հավելվածներով սահմանված տեսակների գոյատևմանը: Արդյունքում, «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում ներառված բոլոր բնակմիջավայրերը և տեսակները, բացառությամբ՝ N°1354-ի՝ գորշ արջի (*Ursus arctos*), գնահատվել են ԲՄԱԳ-ում որպես Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում «կրիտիկական բնակմիջավայր» չունեցող տեսակներ: Այս եզրակացությունը ուղղակիորեն հակասում է Բեռնի կոնվենցիայի դրույթներին:

2. **ԲՄԱԳ-ում մեղմացուցիչ միջոցառումների և մնացորդային ազդեցությունների գնահատման մեթոդաբանությունը**¹³ հակասում է Բեռնի կոնվենցիայի դրույթներին ԲՀՀՏ-ների պաշտպանության մասով: Մեղմացուցիչ միջոցառման նպատակն է նվազագույնի հասցնել մնացորդային ազդեցությունները: Սակայն ԲՄԱԳ-ում հիմնական մեղմացուցիչ միջոցառումները տեսակների տեղափոխումն է (մեղմացնելու ներգործությունը բուսատեսակների, օձերի և մողեսների վրա) և անձեռնմխելի տարածք սահմանելը (բուսականության, բուսատեսակների, թռչնատեսակների և գորշ արջի վրա ներգործությունը

¹² և կարագրված է «Ամուլսարի բնական և կրիտիկական բնակմիջավայրի գնահատում, Չայաստան» փաստաթղթի երրորդ գլխում՝ «Կրիտիկական բնակմիջավայր», ԲՄԱԳ-ի մի մաս

¹³ Մեղմացման և փոխատուցման միջոցառումների և կարագրված բնական համար տես «Ամուլսարի բնական և կրիտիկական բնակմիջավայրի գնահատում, Չայաստան» փաստաթուղթ և 6.11 ենթագլխում «Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր» և կենսաբազմազանության գործողությունների և կառավարման պլաններում

մեղմացնելու նպատակով): ԲՀՀՏ-ների պաշտպանության ներքո գտնվող տեսակների համար այս միջոցառումները մեղմացուցիչ չեն, այլ փաստացի փոխհատուցման միջոցառումներ են, քանի որ չեն հետապնդում բնակմիջավայրերը և բնակմիջավայրերում ապրող տեսակները պաշտպանելու նպատակ (ծրագրի ազդեցության ներքո գտնվող ԲՀՀՏ-ներում և տեղանքներում): Նույն եզրակացությունը կարելի է նաև կայացնել «բնակմիջավայրերի վերականգնում» միջոցառման դեպքում, երբ տնկվում են ծառերի տեղական տեսակներ: Այս միջոցառումը նույնպես միտված չէ նվազեցնել ծրագրի ազդեցությունը ԲՀՀՏ-ների բնակմիջավայրերի վրա, բայց նախատեսում է «վերականգնում» այլ վայրում՝ այսպիսով չհամապատասխանելով Բեռնի կոնվենցիայի դրույթներին: Ավելին, բնակմիջավայրերի ոչ կենսունակ և կենսունակ առանձնահատկությունների պահպանումը և վերականգնումը Բեռնի կոնվենցիայից բխող պարտականությունն է, որը պետք է իրականացվի համապատասխան մարմինների կողմից: Այս տարբերակով այն չի կարող ընդունվել նույնիսկ որպես փոխհատուցման միջոցառում «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից:

- 3. Նոր ազգային պարկի հիմնումը («Ջերմուկ» ազգային պարկ) որպես փոխհատուցման միջոցառում նույնպես հակասում է Բեռնի կոնվենցիային:** Կոնվենցիայի համաձայն՝ կառավարությունը պարտավոր է ապահովել «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի ամբողջ տարածքի պաշտպանությունը, որը կարելի է ապահովել՝ հայտարարելով նոր ազգային պարկի կամ պաշտպանության այլ ձևի մասին՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Որպես այդպիսին, նոր ազգային պարկի մասին հայտարարելը չի կարող ընդունվել որպես փոխհատուցման միջոցառում ընդդեմ ծրագրի ազդեցությունների ԲՀՀՏ-երում: Ավելին, առաջարկվող ազգային պարկի սահմանները, ինչպես նշված է ԲՄԱԳ-ում, չի ընդգրկում «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի ամբողջ տարածքը և մասնավորապես Ամուլսարի ոսկու նախագծի տարածքները բացառված են առաջարկից, ինչը բոլոր ԲՀՀՏ-ների իրավական առումով պաշտպանելու ՀՀ պարտավորությունների խախտում է: 2017թ. դեկտեմբերին նոր ազգային պարկի սահմանները ներկայացվել են Կենսառեսուրսների կառավարման գործակալություն (ՀՀ բնապահպանության նախարարության մի մաս): Այդ օրվանից ի վեր ազգային պարկի հայտարարման գործընթացը դադարել է և նույնիսկ հանրային քննարկումներ չեն անցկացվել հարակից համայնքների հետ: Մոտ ապագայում չի ակնկալվում, որ «Ջերմուկ» ազգային պարկի մասին կհայտարարվի: Հաշվի առնելով, որ Ամուլսարի ոսկու նախագծի շինարարական աշխատանքներն արդեն իսկ մեկնարկել են և այն, որ փոխհատուցման ցանկացած միջոցառում պետք է անցկացվի նախքան իրական ներգործությունը բնակմիջավայրերի և

տեսակների վրա, այս փաստը ՀՀ միջազգային պարտավորությունների լուրջ խախտում է:

4. **Փոխհատուցման միջոցառումները հակասում են Բեռնի կոնվենցիայի 9-րդ հոդվածին:** 9-րդ հոդվածը նկարագրում է միայն տեսակների և բնակմիջավայրերի պաշտպանության հնարավոր բացառությունները տեղում. *«Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դիմել բացառությունների՝ կապված 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված դրույթների կիրառման, ինչպես նաև 8-րդ հոդվածում հիշատակված միջոցների օգտագործման արգելման հետ, եթե առկա չէ այլ բավարար լուծում, և եթե այդ բացառությունը վտանգ չի ներկայացնի տվյալ պոպուլյացիայի գոյատևման համար. - ֆլորայի և ֆաունայի պահպանության համար, - հացահատիկային կուլտուրաներին, ընտանի կենդանիներին, անտառին, ձկնատեսակներին և տնտեսության այլ ձևերին հասցվելիք լուրջ վնասը կանխելու նպատակով, - ելնելով հասարակության առողջության և անվտանգության, օդի անվտանգության և այլ առաջնահերթ հանրային շահերից, - հետազոտական և կրթական աշխատանքների, պոպուլյացիայի վերականգնման, վերարտադրման և բազմացման նպատակով, - խիստ հսկողության պայմաններում ընտրովի կարգով և սահմանափակ քանակությամբ թույլատրելի որոշ վայրի բույսեր հավաքելը, առանձին վայրի կենդանիներ պահելը կամ այլ խելամիտ նպատակներով դրանք օգտագործելը:»*

Նստվածքային ազդեցությունների գոյությունը նշանակում է, որ Բեռնի կոնվենցիայի նպատակները չեն իրականացվում: ԲՀՀՏ-ների պաշտպանության ներքո գտնվող վայրի բուսական և կենդանական աշխարհների տեսակների միջավայրերի և վտանգված բնակմիջավայրերի պաշտպանության ապահովումը և դրանց համար կարևոր էկոլոգիական առանձնահատկությունների պահպանումը կարող է վտանգվել ծրագրի իրականացումից հետո: Փոխհատուցման միջոցառումների կիրառումը չի հանգեցում այս հետևանքներից խուսափման, քանի որ չկան իրավական հիմքեր այս դրույթներից նման բացառություններ անելու համար: ԲՄԱԳ-ի որևէ մասում այս հարցը չի քննարկում:

ՄՍՍՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 3. հնարավոր ազդեցությունները «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում ներառված տեսակների և միջավայրերի վրա¹⁴: Մանրամասներ «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում ներառված տեսակների և միջավայրերի մասին.

- **Բնակմիջավայրեր 4-րդ բանաձևից (1996թ.).** ստորև նշված բոլոր բնակմիջավայրերը թվարկված են «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի

¹⁴ <http://natura2000.eea.europa.eu/Emerald/SDF.aspx?site=AM0000009&release=2>

տվյալների ստանդարտ ձևաչափում որպես տարածքում առկա բնակմիջավայրեր: ԲՄԱԳ-ում քննարկվել են Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում առկա բնակմիջավայրերը մի քանի գլխում՝ Գլուխ 4 «Ելակետային տվյալներ», ենթագլուխ 4.10 «Կենսաբազմազանություն», ենթագլուխ 4.10.3 «Բուսականության ուսումնասիրություններ և արդյունքներ» և հավելված 4.10.3 «Բնական և կրիտիկական միջավայրի գնահատում»: ԲՄԱԳ-ում ուսումնասիրվել և նկարագրվել են բուսականության տեսակները՝ ՀՀ բնակմիջավայրերի դասակարգման համաձայն: Այս արդյունքները չեն համապատասխանում 4-րդ բանաձևով (1996թ.) սահմանված բնակմիջավայրերի Էմերալդյան դասակարգմանը՝ կիրառելով ԵԲՏՀ (EUNIS) դասակարգումը և երկուսն էլ համեմատելի չեն: Հետևաբար, ԲՄԱԳ-ը չէր կարող կիրառվել որպես Բեռնի կոնվենցիայով պաշտպանված Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում բնակմիջավայրերի առկայության կամ բացակայության հղում: Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում, հավանաբար, տեղակայված կամ նախագծի կողմից հավանական ազդեցության տակ գտնվող բնակմիջավայրերը նկարագրելու համար օգտագործել ենք երկու աղբյուր՝ 2016թ.¹⁵ «Հայաստանի բնակմիջավայրեր» (այսուհետ՝ ԲնակՀայ) և «4-րդ բանաձևի (1996թ.) բնակմիջավայրերի մեկնաբանման ձեռնարկ, որտեղ թվարկված են պաշտպանության հատուկ միջոցառումներ պահանջող վտանգված բնակմիջավայրերը»¹⁶ (այսուհետ՝ ԲնակԲեռն)

○ **E1.11 Եվրո-սիբիրական խոտային համակեցություններ քարային փլվածքների վրա:** ԲնակԲեռնի համաձայն, այդ բնակմիջավայրը լայնորեն տարածված է Եվրոպայում և Սևծովյան տարածաշրջանում տարբեր կլիմայական պայմաններում: ԲնակՀայի համաձայն, այն բնակմիջավայրը տարածված է Հայաստանի բարձրադիր բոլոր գոտիներում՝ ավագոտ կամ քարքարոտ տարածքներում, որտեղ բուսականությունը հիմնականում բաղկացած է մեկամյա բույսերից, սուկուլենտներից և կիսասուկուլենտներից:

○ **E2.3 Լեռնային խոտհարքային մարգագետիններ.** ԲնակԲեռնի համաձայն այս բնակմիջավայրերը հարուստ լեռնային մեզոտրոֆ խոտային համակեցություններից մինչև էվտրոֆ խոտային համակեցություններ են և մերձալպյան մակարդակի բարձր սարեր: ԲնակՀայի համաձայն, այն բնակմիջավայրը տարածված է Հայաստանում՝ մասնավորապես բարձր-լեռնային և մերձալպյան մակարդակներում՝ ծ.մ. 1900 և 2800 մետր

¹⁵ Գ. Մ. Ֆայվոլոշ, Ա. Ս. Ալեքսանյան, «Հայաստանի Բնակմիջավայրերը», Հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Բուսաբանության ինստիտուտի տեղեկանք 2016թ., 360 էջ


¹⁶ Դ. Էվանս (ETC/BD), Մ. Ռոքարթս, 2015թ. օգոստոսի 31, 4-րդ բանաձևի (1996թ.) Բնակմիջավայրերի մեկնաբանման ձեռնարկ, որտեղ թվարկված են պաշտպանության հատուկ միջոցառումներ պահանջող վտանգված բնակմիջավայրերը, Երրորդ ևախնակալ տարբերակ, 2015թ, Ստրասբուրգ Strasbourg T-PVS/PA (2015) 9 [pa09e_2015.doc]. 110 էջ

բարձրության վրա:

- **E3.3 Ենթամիջերկրածովյան խոնավ մարգագետիններ.** ԲնակՔեռնի համաձայն՝ այս խոնավ մարգագետինները հարուստ են երեքնուկով (*Trifolium spp.*)՝ տարածված մայրցամաքային մասերում, և մշակվում են հարթավայրերից վերև, բայց լեռնային մակարդակից ներքև: ԲնակՀայի համաձայն՝ այն տարածված է Հայաստանում, բայց ի հակադրություն Եվրոպայի, որտեղ այս բնակմիջավայրը հիմնականում տարածված է հարթավայրերում, Հայաստանում այս բնակմիջավայրը հիմնականում գտնվում է միջին լեռնային գոտուց մինչև մերձալպյան գոտի:
- **E3.4 Թաց և խոնավ էվտրոֆ և մեզոտրոֆ խոտային համակեցություններ.** ԲնակՔեռնի համաձայն՝ սրանք թաց և խոնավ խոտային համակեցություններ են և ողողովի մարգագետիններ են փշատերև անտառների և կաղնուտների գոտիներում: ԲնակՀայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված է Հայաստանում, որը կարելի է գտնել բարձրադիր լեռնային գոտում:
- **E4.3 Ալպյան և մերձալպյան խոտային համակեցություններ թթու հողերի վրա.** ԲնակՔեռնի համաձայն՝ այս խոտային համակեցությունները տարածված են ալպյան և մերձալպյան մակարդակներում և տարածվում են բյուրեղային ժայռերի վրա կամ սակավ կիր պարունակող սուբստրատների կամ լեռների ապակրացված հողերի վրա: ԲնակՀայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված է Հայաստանում, և խոտային համակեցությունները բարձրադիր լեռներում են՝ ալպյան և մերձալպյան մակարդակում, մասնավորապես հրաբխածին տարածքներին հատուկ է բուսականության այս տեսակը:
- **E5.4 Խոնավ բարձրախոտային կամ պտերային անտառի եզրեր կամ մարգագետիններ.** ԲնակՔեռնի համաձայն՝ սրանք բարձրախոտային կամ պտերային բուսականություն են, հաճախ գերիշխում են ջրային հոսքերի երկայնքով, խոնավ մարգագետիններում և անտառեզրերի ստվերում լեռնային գոտուց ներքև: ԲնակՀայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված է Հայաստանում մինչև ցածր լեռնային գոտի:
- **F9.1 Ափամերձ թփուտներ.** ԲնակՔեռնի համաձայն՝ դրանք լայնատերև ուռենիների կամ այլ ափամերձ թփուտների բնակմիջավայրեր են գետերի կողքին՝ 5 մետրը չգերազանցող բարձրությամբ: ԲնակՀայի համաձայն՝ այս բնակմիջավայրը Հայաստանում կարելի է գտնել բարձրության բոլոր գոտիներում՝ գետերի կամ չհոսող ջրային մարմինների ափին:
- **G1.11 Ափամերձ ուռենու անտառներ.** ԲնակՔեռնի համաձայն՝ դրանք թփուտային կամ ծառանման կազմավորումներ են, որոնք աճում են հոսող ջրի եզրագծով և ենթակա են պարբերական հեղեղման, աճում են նոր ջրաբերուկների վրա: ԲնակՀայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված է Հայաստանում մինչև միջին լեռնային գոտի:
- **H1 Քարանձավներ.** ԲնակՀայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված

է Հայաստանում և հրաբխային լեռներում, որոնք հիմնականում բարձր և խորը չեն:

- **H2.3 Թթվային սիլիցիումային բարեխառն-լեռնային գոտու քարացրոններ.** Բնակեռնի համաձայն՝ դրանք սիլիցիումային բարեխառն-լեռնային գոտու քարացրոններ են բարձր մակարդակներում և անտառային գոտու լեռնաշարերի սառը հատվածներում: Բնակչայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված է Հայաստանում միջին լեռներից մինչև ալպյան գոտիներ:
- **H3.1 Թթվային սիլիցիումային ժայռեր.** Բնակչայի համաձայն՝ այս բնակմիջավայրը տարածված է Հայաստանում՝ բարձրադիր բոլոր գոտիներում, հրաբխային լեռներում:
- **Տեսակներ 4-րդ բանաձևից (1996թ.)՝**
- **Բույսեր.** *Իժախոտ ռուսաստանյան 4067 Echium russicum.* այս տեսակը լայն տարածում ունի Հայաստանում և գտնվում է պաշտպանության ներքո երկրի գրեթե բոլոր ԲՀՀՏ-ներում, ինչպես երևում է նշանակված ԲՀՀՏ-ների քարտեզի վրա 2017թ. Կենսաաշխարհագրական սեմինարի էջում և եզրակացություններում: «Ջերմուկ տարածք» (AM000009) ԲՀՀՏ-ն Հայաստանում այս տեսակի պաշտպանության երկու առավելագույն կարևոր տարածքներից մեկն է (Պոպուլյացիա A). այս տեսակը չի նշվում ԲՄԱԳ-ում և ներառված չէ ՀՀ կարմիր գրքում: Սակայն, համապատասխան բնակմիջավայրերը (խոտային համակեցությունները) ամենուրեք առկա են ծրագրի տարածքում և այս տեսակը պետք է գնահատված լիներ ԲՄԱԳ-ում՝ Բեռնի կոնվենցիայի դրույթների համաձայն:



○ *Անողնաշարներ. 6199 Euplagia quadripunctaria.*

○ *Չկներ.*

■ 1130 *Aspius aspius*

Առկա է Արփա գետում «Աջակցություն փոքր ՀԵԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի հաշվետվության համաձայն¹⁷:

■ 6168 *Luciobarbus comizo*

Հավանաբար, տեխնիկական սխալ է, պետք է լիներ *Luciobarbus capito*, որն առկա է Արփա գետում «Աջակցություն փոքր ՀԵԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի հաշվետվության համաձայն:

■ 1146 *Sabanejewia aurata*

○ *Թռչուններ*

■ Երկնագույն ծղնի (A229 *Alcedo atthis*)

Համապատասխան բնակմիջավայր առկա է Արփա գետի երկայնքով: Գետը չի գնահատվել ԲՄԱԳ-ի ելակետային տվյալներով:

■ Դաշտային ձիուկ (A255 *Anthus campestris*)

¹⁷ <https://www.ecolur.org/files/uploads/pdf/dzernarkangleren.pdf>

- Հավանական բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
- Սովորական այծկիթ (A224 *Caprimulgus europaeus*)
Հավանական բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Մարգահավ (A122 *Crex crex*);
Հավանական բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Սիրիական փայտփորիկներ (A429 *Dendrocopos syriacus*);
Հավանական բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Այգու դրախտապան (A379 *Emberiza hortulana*);
Միանշանակ բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Ժուլան (A338 *Lanius collurio*);
Միանշանակ բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Սևաճակատ շամպրուկ (A339 *Lanius minor*);
Հնարավոր բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Անտառային արտույտ (A246 *Lullula arborea*);
Միանշանակ բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Կապտափող սոխակ (A272 *Luscinia svecica*);
Բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Red-billed chough (A346 *Pyrrhocorax pyrrhocorax*);
Միանշանակ բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Ճուռականման շահրիկ (A307 *Sylvia nisoria*);
Միանշանակ բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:
 - Կարմիր բաղ (A397 *Tadorna ferruginea*);
Միանշանակ բնադրող է՝ ելակետային տվյալների համաձայն:

○ Կաթնասուններ

Ստորև թվարկված բոլոր տեսակները ներառված են «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, բոլորը ներառված են Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում (համայնքային հետաքրքրություն ներկայացնող կենդանիներ և բույսեր, որոնց պահպանումը պահանջում է պահպանման հատուկ տարածքների նախատեսում) և Հավելված 4-ում (համայնքային հետաքրքրություն ներկայացնող կենդանիներ և բույսեր, որոնք խիստ պաշտպանության կարիք ունեն): Նրանցից մի քանիսն արդեն իսկ ներառված են ՀՀ կարմիր գրքում: Հարց է ծագում, թե ինչու միջազգային կոնվենցիայով միևնույն կարգավիճակ ունեցող տեսակների դեպքում ներդրողը որևէ միջոցառում չի ձեռնարկել ուսումնասիրել դրանց վրա ունեցած ազդեցությունները և որոշակի բնակմիջավայրի պայմանների անհրաժեշտությունը, ինչպես դա արվել է գորշ արջի դեպքում:

- Գորշ գայլ 1352 *Canis lupus*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև

Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, սակայն չեն անցկացվել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ կիրառելով ժամանակակից և խելամիտ մեթոդներ: «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի բնակմիջավայրերի մեծամասնությունը Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում հարմար են գորշ գայլերի բնակության համար:

■ Բեզոարյան այծ 1372 *Capra aegagrus*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, սակայն չեն անցկացվել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ կիրառելով ժամանակակից և խելամիտ մեթոդներ: «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ում կան բնակմիջավայրեր, որոնք հարմար են բեզոարյան այծերի բնակության համար: 2018թ. հոկտեմբերի սկզբին անցկացված դաշտային ուսումնասիրությունների ընթացքում մեր թիմը գրանցել է բեզոարյան այծի առկայությունը երկու տարբեր տեղանքներում՝ «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի սահմանների շրջանակներում: Բեզոարյան այծի համարժեք ուսումնասիրությունները և պահպանմանն ուղղված գործողություններն նույնպես էական են, քանի որ այն կրիտիկական վտանգված ընձառյուծի /*Panthera pardus saxicolor*/ հիմնական որսն է:

■ Ջրասամույր 1355 *Lutra lutra*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, սակայն չեն անցկացվել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ կիրառելով ժամանակակից և խելամիտ մեթոդներ:

■ Սովորական լուսան 1361 *Lynx lynx*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում, Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, սակայն չեն անցկացվել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ կիրառելով ժամանակակից և խելամիտ մեթոդներ: «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի

բնակմիջավայրերի մեծամասնությունը Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում հարմար են լուսանների բնակության համար: Անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ ժամանակակից և խելամիտ մեթոդների կիրառմամբ: Չափազանց կարևոր է գնահատել այս վայրերը որպես միջանցքներ, որոնք անհրաժեշտ են կենդանիների բնակմիջավայրերի միջև կապը պահպանելու նպատակով:

- Գորշ արջ 1354 *Ursus arctos*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում, Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, և կոնկրետ ուսումնասիրություն է անցկացվել գորշ արջի մասով: Այս ուսումնասիրության արդյունքում, ուսումնասիրված տարածքում գրանցվել է այս տեսակի բարձր խտություն, որը նաև ներառում է Ամուլսարի ոսկու նախագծի տարածքը: Գրանցված բարձր խտությունը ($59.4/1000$ կմ²) (Burton et al., 2018¹⁸) նշան է, որ տարածքը առանցքային է գորշ արջերի համար և անհրաժեշտ է խիստ միջոցառումներ ձեռնարկել՝ պահպանելու արջի բնակմիջավայրերը և ապահովելու անդորրը նախագծի ազդեցության ներքո գտնվող տարածքում: Գրանցված բարձր խտությունը նաև նախապայման է առանձնակների տեղափոխման աճի համար հարակից բնակմիջավայրերից առավելագույն պայմաններով: Չափազանց կարևոր է գնահատել այս վայրերը որպես միջանցքներ, որոնք անհրաժեշտ են կենդանիների բնակմիջավայրերի միջև կապը պահպանելու նպատակով: Որևէ գնահատում էմերալդ վայրերի վերաբերյալ Հայաստանում չի նախաձեռնվել: Ավելին, ուսումնասիրությունների հեղինակները հաստատում են հանքաարդյունաբերության ռիսկերը գորշ արջի պոպուլյացիայի համար. «Այս հիմնական տեսակի շարունակական ներկայությունը կարող է սպառնալ հանքաարդյունաբերությունը, որսագողությունը և այլ անտրոպոգեն ճնշումները տարածաշրջանում՝ թերագնահատելով ռազմավարական պահպանման պլանավորման, ազդեցության մեղմացման, և լայնածավալ էկոլոգիական մշտադիտարկման հրատապ անհրաժեշտությունը կենսաբազմազանության այս թեժ կետում»: (Burton et al., 2018)

- Խայտաքիս 2635 *Vormela peregusna*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում, Հավելված 4-ում և ՀՀ

18

https://www.researchgate.net/publication/326357180_Density_and_distribution_of_a_brown_bear_Ursus_arctos_population_within_the_Caucasus_biodiversity_hotspot

կարմիր գրքում: Սույն տեսակը չի գրանցվել 2008-2015թթ ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, սակայն «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի բնակմիջավայրերի մեծամասնությունը Ամուլսարի նախագծի տարածքում հարմար են խայտաքիսների բնակության համար, ինչպես օրինակ՝ լեռնային մարգագետինները, ալպյան և մերձալպյան խոտային համակեցությունները և այլն: Այս փաստն արձանագրված է նաև ՀՀ կարմիր գրքում. «Vormela peregusna VU A2c B1b (iii). Տարածվածությունը Հայաստանում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, ծ.մ. 1000–2000 մ բարձրություններում: Արեալը և էկոլոգիան բոլորովին ուսումնասիրված չեն: Ապրելավայրերը: Կիսաանապատներ, լեռնային չոր տափաստաններ, լեռնային մարգագետնատափաստաններ և ենթալպիան մարգագետիններ: Վտանգման հիմնական գործոնները: Բիոտոպերի ոչնչացումը: Թվաքանակի աճին խոչընդոտող հիմնական սահմանափակող գործոնը կիսաանապատային և լեռնատափաստանային հողերի մշակումն է, դրանց ապրելավայրերում անասունների գարնանային արածեցումը, ինչպես նաև մեծ քանակությամբ պեստիցիդների և քիմիական պարարտանյութերի օգտագործումը» : Անհրաժեշտ են այս տեսակի լրացուցիչ ուսումնասիրություններ՝ ժամանակակից և խելամիտ մեթոդների կիրառմամբ:

- Սովորական երկարաթև չղջիկ 1310 *Miniopterus schreibersii*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Սույն տեսակը չի գրանցվել 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում: Չղջիկը սովորաբար բնակվում է ծ.մ. 1400 մետր բարձրության վրա, սակայն, հայտնի է, որ չղջիկը կարող է նաև բնակվել մինչև ծ.մ. 2600 մետր բարձրության վրա (ԲՊՄՄ կարմիր ցուցակ): Անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ:
- Սրականջ գիշերաչղջիկ 1307 *Myotis blythii*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում՝ այսպես կոչված տարածաշրջանային ուսումնասիրության տարածքում (ՏՈԻՏ) (Ամուլսարի ձեռնաթևավորների էկոլոգիական ուսումնասիրություն, Հավելված 4.10.4): Սակայն երկու ուսումնասիրությունների տարածքների սահմանները հստակեցված չեն քարտեզով այս ուսումնասիրությունում: Անհրաժեշտ են

լրացուցիչ ուսումնասիրություններ:

- Եռագույն գիշերաչղջիկ 1321 *Myotis emarginatus* - ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում: Սույն տեսակը գրանցվել է 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում, այսպես կոչված տարածաշրջանային ուսումնասիրության տարածքում (ՏՈԻՏ):

- Հարավային պայտաքիթ 1305 *Rhinolophus Euryale*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում, Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Սույն տեսակը չի գրանցվել 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում: Տեղանքի տվյալների ստանդարտ ձևաչափում այս տեսակը նկարագրված է որպես հազվադեպ, ուստի անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ բացահայտելու և գնահատելու Ամուլսարի ոսկու նախագծի հավանական ազդեցությունները:

- Մեծ պայտաքիթ 1304 *Rhinolophus ferrumequinum*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում: Սույն տեսակը չի գրանցվել 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում: Տեղանքի տվյալների ստանդարտ ձևաչափում այս տեսակը նկարագրված է որպես հազվադեպ, ուստի անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ բացահայտելու և գնահատելու Ամուլսարի ոսկու նախագծի հավանական ազդեցությունները:

- Փոքր պայտաքիթ 1303 *Rhinolophus hipposideros*. ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում և Հավելված 4-ում: Սույն տեսակը չի գրանցվել 2008-2015թթ. ԲՄԱԳ-ի կենսաբազմազանության ելակետային ուսումնասիրություններում: Տեղանքի տվյալների ստանդարտ ձևաչափում այս տեսակը նկարագրված է որպես հազվադեպ, ուստի անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ բացահայտելու և գնահատելու Ամուլսարի ոսկու նախագծի հավանական ազդեցությունները:

- Մեհելիի պայտաքիթ 1302 *Rhinolophus mehelyi* - ներառված է «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ընդունված ստանդարտ ձևաչափում, ինչպես նաև Բնակմիջավայրերի դիրեկտիվայի Հավելված 2-ում, Հավելված 4-ում և ՀՀ կարմիր գրքում: Տեղանքի տվյալների ստանդարտ ձևաչափում այս տեսակը նկարագրված է որպես տարածված, ուստի անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ բացահայտելու և գնահատելու Ամուլսարի ոսկու նախագծի հավանական ազդեցությունները:

ՄՏՄՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 4. հնարավոր ազդեցություններ պաշտանված այլ տեսակների և բնակմիջավայրերի վրա

Այս գլխում ներառված է տեղեկատվություն այն տեսակների մասին, որոնք ընդգրկված չեն «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում, բայց կարող են հայտնվել Ամուլսարի ոսկու նախագծի ազդեցության ներքո և նրանց անհրաժեշտ է պաշտպանություն մեկ կամ մի քանի պատճառներով՝

- Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում թվարկված տեսակներ, որոնք առկա են «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ում ըստ գիտական տվյալների:
- Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում թվարկված տեսակներ, որոնց բնակմիջավայրերը պետք է պաշտպանվեն՝ իրենց պահպանման կարգավիճակի վերականգման պահանջների համաձայն:
- Այլ ԲՀՀՏ-ների տվյալների ստանդարտ ձևաչափերում ընդգրկված տեսակներ:
- ԲՊՄՄ կարմիր ցուցակի կամ ՀՀ կարմիր գրքի համաձայն՝ հետևյալ կարգավիճակ ունեցող տեսակները՝ խոցելի, վտանգված կամ կրիտիկական վիճակում գտնվող:

1. Կովկասյան ընձառյուծ (*Panthera pardus saxicolor*)

Կովկասյան ընձառյուծը, *Panthera pardus saxicolor*, նույնպես ներառված չէ «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում: ԲՄԱԳ-ը չի գտել կրիտիկական բնակմիջավայր Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում այս տեսակի համար: Սակայն ՀՀ կարմիր գրքում այն ունի հետևյալ կարգավիճակը՝ կրիտիկական վիճակում գտնվող: Լիլիթ Սիմոնյանի մագիստրոսական թեզի համաձայն, որի վերնագիրն է «Ջերմուկում և հարակից տարածքներում խոշոր կաթնասունների բազմազանության ուսումնասիրությունը», ԵՊՀ, Կենսաբանության ֆակուլտետ, կենդանաբանության բաժին, Երևան, 2016թ., «*Panthera pardus-ի առանձնյակը (Linnaeus, 1758) գրանցվել է 2014թ. աշնանը՝ լեռան գագաթին*» (Էջ 30):

Անհայտ է, որ «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տարածքում առկա է փաստացի պոպուլյացիա, բայց այն ընձառյուծի նախկին արեալ է, և այս տարածքը պոտենցիալ բարձրորակ բնակմիջավայր է ընձառյուծի համար (Gavashelishvili & Lukarevskiy, 2008¹⁹): ՀՀ կարմիր գրքում գրված է. «Շատ կարևոր է նաև դժվարհասանելի ժայռերի առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս ընձառյուծին բեզոարյան այծերին որսալու ժամանակ հանկարծակի դուրս գալու, ինչպես նաև հանգստանալու համար: Որպես բույն օգտագործում են քարանձավները, ժայռաճեղքերը, խիտ թփուտները»: Ամուլսարի ոսկու նախագծի կույտային տարրավացման հարթակը գտնվում է դժվարհասանելի ժայռերով և բեզոարյան այծերի կարևոր պոպուլյացիայով հայտնի Արփայի կիրճից 250 մետր հեռավորության վրա: 2018թ. հոկտեմբերի 6-ին մենք նկատեցինք բեզոարյան այծերի երկու խմբի՝ համապատասխանաբար 18 և 8 առանձյակներով:

ՀՀ-ն ստանձնել է պարտավորություն՝ մշակել և իրականացնել ընձառյուծի վերականգման ծրագրեր: Վերականգնումը պետք է հիմնված լինի ԲՀՀՏ-ների պաշտպանության ներքո գտնվող հավանական բնակմիջավայրերի վրա, որը նախկին արեալի մի մասն է: Ավելին, «Ընձառյուծի պահպանման ռազմավարությունը Կովկասի էկոռեգիոնում» փաստաթուղթը ընդունվել է ԲՄՄՊ-ի Կատվազգիների մասնագիտական խմբի և WWF-ի ներկայացուցիչների կողմից Թբիլիսիում՝ 2007թ. մայիսի 30-ից հունիսի 1-ը²⁰: Սույն ռազմավարության համաձայն՝ Կովկասի էկոռեգիոնում ընձառյուծի պահպանման երկարատև տեսլականն է. «*Ընձառյուծները և բոլոր վայրի կենդանիները պետք է բարգավաճեն Կովկասի էկոռեգիոնում մարդկանց հետ ներդաշնակ*»: Այս տեսլականին հասնելու համար սահմանված է միջնաժամկետ նպատակ. «*Ապահովել ընձառյուծի և վայրի որսի և դրանց բնակմիջավայրերի կենսունակ մետապոպուլյացիաների պահպանումը և կայուն կառավարումը և կառուցել կայուն գոյակցության մեխանիզմներ տեղական համայնքների հետ Կովկասի էկոռեգիոնում*»: ԲՄՄԳ-ում չկա որևէ քննարկում այս մասով և առկա չէ ընձառյուծի հավանական բնակմիջավայրերի և տվյալ տարածքում ընձառյուծի ապագա վերականգման հնարավորությունների վրա նախագծի հնարավոր ազդեցության գնահատումը:

¹⁹https://www.researchgate.net/publication/228040273_Modeling_the_habitat_requirements_of_leopard_Panthera_pardus_in_west_and_Central_Asia

²⁰ <https://portals.iucn.org/library/sites/library/files/documents/2007-068.pdf>



Արփայի կիրճից 250 մետր հեռավորության վրա գտնվող կույտային տարրավացման հարթակը, 5.10.2018թ.



Բեզոարյան այծերը Արփայի կիրճում, 6.10.2018թ.

2. Հայկական մուֆլոն (*Ovis orientalis gmelinii*)

Հայկական մուֆլոնը, *Ovis orientalis gmelinii*, ներառված չէ «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում: ԲՄՄԳ-ը չի գտել կրիտիկական բնակմիջավայր Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում այս տեսակի համար: Սակայն ՀՀ կարմիր գրքում այն ունի հետևյալ կարգավիճակը՝ վտանգված: Լիլիթ Սիմոնյանի մագիստրոսական թեզի համաձայն, որի վերնագիրն է՝ «Ջերմուկում և հարակից տարածքներում խոշոր կաթնասունների բազմազանության ուսումնասիրությունը», (ԵՊՀ, Կենսաբանության ֆակուլտետ, կենդանաբանության բաժին, Երևան, 2016թ.), «*Ovis orientalis (Gmelin, 1774)*, որը նախկինում գրանցվել էր Մարցալի լեռան տեղանքում, հազվադեպ կարելի է գտնել Մայրաց ձորում» (էջ 26): Ըստ Խորոզյանի և ուր. (2009թ.), այս տեսակի կարգավիճակը տարածքում հստակ չէ: ՀՀ կարմիր գրքի համաձայն՝ բացի երկրի այլ մասերից, ընձառյուծի արեալը նաև ներառում է Վայոց ձորի լեռնաշարը, որտեղ տարածվածության ամենամոտ տեղանքը 15-25 մետր հեռավորության վրա է Ամուլսարի ոսկու նախագծի ենթակառուցվածքներից: WWF-ի փորձագետների կողմից մշակված բնակմիջավայրի համապատասխանելիության մոդելի համաձայն՝ «Ջերմուկ տարածք» ԲՀՀՏ-ում կան բարձր համապատասխանելիության բնակմիջավայրեր՝ մասնավորապես Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում: «Հայաստանում հայկական մուֆլոնի (*Ovis [orientalis] gmelini* Blyth) և բեզոարյան այծի (*Capra aegagrus* Erxleben) պահպանման ռազմավարություն» փաստաթղթում, որի կազմմանն աջակցել է Բնության համաշխարհային հիմնադրամը և Կրիտիկական էկոհամակարգերի գործընկերության հիմնադրամը, շեշտվում է, որ այս տեսակի պահպանման հիմնական գործողությունները պետք է ներառեն համապատասխան բնակմիջավայրերի պահպանումը և վերականգնումը, ինչպես նաև օրենսդրական և կանխարգելիչ միջոցառումների հարկադիր կիրառումը՝ վերահսկելու հանքաարդյունաբերության և ենթակառուցվածքների զարգացումը: Բացի այդ, մուֆլոնը որսակեր է կրիտիկական վիճակում գտնվող ընձառյուծի համար (Շարբաֆի և ուր., 2016²¹) և, որպես այդպիսին, անհրաժեշտ են ավելի խորը հետազոտություններ, մշտադիտարկում և պահպանմանն ուղղված միջոցառումներ:

3. Բեռնի կոնվենցիայով պաշտպանված թռչունները Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում

ԲՄՄԳ-ի ելակետային ուսումնասիրությունների համաձայն՝ Բեռնի կոնվենցիայի

²¹https://www.researchgate.net/publication/294882409_Prey_of_the_Persian_leopard_Panthera_pardus_saxicolor_in_a_mixed_forest_steppe_landscape_in_north_eastern_Iran_Mammalia_Felidae

6-րդ բանաձևի առնվազն 16 թռչնատեսակ գրանցված են որպես բնադրող: Որպես այդպիսին դրանք կարող էին ներառված լինել «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում: Թռչունների բնակմիջավայրերը պետք է համարվեն կրիտիկական բնակմիջավայր, բայց դա արվել է միայն տափաստանային հողմավոր բազեի համար (*Falco naumanni*): Մնացած այլ 12 տեսակների համար չեն առաջարկվել մեղմացման, փոխհատուցման միջոցառումներ.

1. Գառնանգղ (*Gypaetus barbatus*). միանշանակ ապացուցված բնադրում Արփայի կիրճում և նախագծի տարածքի օգտագործում զուգավորման ժամանակահատվածում
2. Գիշանգղ (*Neophron percnopterus*). միանշանակ բնադրում Արփայի կիրճում և նախագծի տարածքի օգտագործում զուգավորման ժամանակահատվածում
3. Քարարծիվ (*Aquila chrysaetos*). հավանական բնադրում մի քանի զույգերով
4. Փոքր շահնարծիվ (*Aquila pomarina*). հավանական բնադրում
5. Գաճաճ արծիվ (*Hieraetus pennatus*). հավանական բնադրում
6. Օձակեր արծիվ (*Circaetus gallicus*). հավանական բնադրում
7. Կրետակեր (*Pernis apivorus*). հնարավոր բնադրում հարակից տարածքներում և նախագծի տարածքի օգտագործում զուգավորման ժամանակահատվածում
8. Թավշաոտ ճուռակ (*Buteo rufinus*). միանշանակ բնադրում
9. Մարգագետնային մկնաճուռակ (*Circus pygargus*). միանշանակ բնադրում
10. Իսկական բազե (*Falco peregrinus*): հավանական բնադրում
11. Տափաստանային հողմավոր բազե (*Falco naumanni*). միանշանակ բնադրում Ամուլսարի հարավում և նախագծի տարածքի օգտագործում կերակրման համար
12. Բվեճ (*Bubo bubo*): հավանական բնադրում
13. Փոքր արտույտ (*Calandrella brachydactyla*): հավանական բնադրում

4. Հայկական լեռնատափաստանային իծ և պալլասի մազլցող սահնօձ

Հայկական լեռնատափաստանային իծը, *Vipera eriwanensis* (հոմանիշ՝ *Vipera ursinii eriwanensis*, *Vipera ursinii*) և պալլասի մազլցող սահնօձը, *Elaphe sauromates* (հոմանիշ՝ *Elaphe quatorlineata sauromates*, *Elaphe quatorlineata*) ներառված չեն «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում: ԲՄՄԳ-ում այս տեսակի համար այն չի համարվել կրիտիկական բնակմիջավայր Ամուլսարի ոսկու նախագծի տարածքում: Սակայն, Բեռնի կոնվենցիայի կենսաաշխարհագրական սեմինարի վերջնական եզրակացությունն այն է,

(Թբիլիսի, Նոյեմբեր 2017)²², որ երկու տեսակներն էլ պետք է ներառված լինեն Հայաստանի ԲՀՀՏ-ների ցանկում, որովհետև նրանք բացառված էին կարգաբախշական պատճառներով (*Vipera ursinii* և *Elaphe quatorlineata* առանձնացված էին մի քանի տեսակի): ԲՄԱԳ-ում (Գլուխ 4) կան հստակ ապացույցներ, որ Ամուլսարի ոսկու նախագծի և «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տարածքներն այս սողունների բնակմիջավայրերն են: Մեր դաշտային ուսումնասիրության ընթացքում մենք գրանցեցինք հայկական լեռնատափաստանային իժ և՛ «Ջերմուկ տարածք», և՛ «Գորհայք տարածք» ԲՀՀՏ-ներում:



Սպանված հայկական լեռնատափաստանային իժը ճանապարհի վրա, 3.10.2018թ., Ամուլսար

Նման հանգամանքներում, Բեռնի կոնվենցիայի՝ *Vipera eriwanensis* և *Elaphe quatorlineata* տեսակների բնակմիջավայրերի պաշտպանությանն առնչվող բոլոր դրույթները «Ջերմուկ տարածք» ԲՀՀՏ-ում ուժի մեջ են:

Հայկական լեռնատափաստանային իժ, 1298 *Vipera eriwanensis* (հոմանիշ՝ *Vipera ursinii eriwanensis*). այս տեսակը տարածված է Ամուլսարի ոսկու հանքի ամբողջ տարածքում և գտնվում է ծ.մ. 1600-2600 մետր բարձրության վրա (կույտային

²² <https://rm.coe.int/detailed-final-conclusions-on-the-representation-of-animal-species-fro/1680779ed7>

տարրավազման հարթակից մինչև լեռնաշարի գագաթ)²³: Այս տեսակը նշված է 6-րդ բանաձևում (1998թ.) *Vipera ursinii* գիտական անվան ներքո և, հետևաբար, ԲՀՀՏ-ները պետք է նախատեսեն այս տեսակի պաշտպանությունը: 2017թ. նոյեմբերի 8-9-ին կայացած Բեռնի կոնվենցիայի կենսաաշխարհագրական սեմինարի եզրակացությունները հետևյալն են. «Անբավարար տվյալներ/Տվյալների ուղղում՝ սույն տեսակը հետ գրանցել տվյալների շտեմարանում»:²⁴ Հետևաբար, սույն տեսակը պետք է ներառվի «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում և գնահատվի ԲՄԱԳ-ում Բեռնի կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

1279 *Elaphe quatuorlineata* (հոմանիշ՝ *Elaphe quatorlineata sauromates*, *Elaphe sauromates*). սույն տեսակը գտնվում է Գնդեվազ գյուղից արևելք²⁵: ԲՄԱԳ-ի 4-րդ գլխի հավելվածի 8-9-րդ էջերում²⁶ հետևյալն է նշված այս տեսակի մասին. «Մի քանի այլ տեսակներ հայտնաբերվել են այս ուսումնասիրության կամ առաջարկվող «Ջերմուկ» ազգային պարկի ուսումնասիրությունների ընթացքում ...բայց ուղղակի ազդեցությունից հեռու գտնվող վայրերում: Այս տեսակներից ոչ մեկը վտանգված չէ տեսական կամ գլոբալ մակարդակով, այդ իսկ պատճառով այլևս քննարկման ենթակա չեն»: Այս տեսակները ԲՄԱԳ գնահատման մեջ չընդգրկելու առաջին փաստարկը հիմնավորված չէ. տեղանքը գտնվում է ուղղակի ազդեցությունից դուրս: Միննույն համապատասխան բնակմիջավայրերը (արտովայրերը, միննույն բարձրությունը) գտնվում են նախագծի տարածքում և տեղանքը տեղակայված է մոտակայքում: Երկրորդ փաստարկը պահպանման կազմվիճակի պակասի մասին նույնպես ճիշտ չէ: Այս տեսակը նշված է 6-րդ բանաձևում (1998թ.) *Elaphe quatorlineata* գիտական անվան ներքո և, հետևաբար, ԲՀՀՏ-ները պետք է նախատեսեն այս տեսակի պաշտպանությունը: 2017թ. նոյեմբերի 8-9-ին կայացած Բեռնի կոնվենցիայի կենսաաշխարհագրական սեմինարի եզրակացությունները հետևյալն են. «Անբավարար տվյալներ/Տվյալների ուղղում՝ սույն տեսակը հետ գրանցել տվյալների շտեմարանում»: Հետևաբար, սույն տեսակը պետք է ներառվի «Ջերմուկ տարածք» (AM0000009) ԲՀՀՏ-ի տվյալների ստանդարտ ձևաչափում և գնահատվի ԲՄԱԳ-ում Բեռնի կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

5. Ապոլլոն թիթեռ (*Parnassius apollo*)

²³ Տե ս՝ ԲՄԱԳ հաշվետվության «Ամուլ սարում սողունների և երկկենցաղների հետազոտության 4-րդ գլխի հավելվածի 13-14 էջ, եզրափակիչ հաշվետվության, 2015թ. նոյեմբեր 24 <https://rm.coe.int/detailed-final-conclusions-on-the-representation-of-animal-species-fro/1680779ed7>

²⁵ Տե ս՝ ԲՄԱԳ հաշվետվության «Առանցքային ուսումնասիրության 4-րդ գլխի հավելված՝ «Առանցքային կենսաբազմազանության ուսումնասիրության ընթացքում գրանցված կենդանական աշխարհի տեսակներ 2008-2018թթ»

²⁶ «Ամուլ սարում սողունների և երկկենցաղների հետազոտության 4-րդ գլխի հավելվածի 13-14 էջ, եզրափակիչ հաշվետվության, 2015թ. նոյեմբեր 24

Ներառված է ՀՀ կարմիր գրքում և IUCN կարմիր գրքում՝ որպես խոցելի: Այս տեսակը գրանցված չէ ծրագրի տարածքում ԲՄԱԳ ուսումնասիրությունների ընթացքում, բայց WWF-Հայաստանի փորձագետները 2018թ. հայտնաբերել են արու առանձնյակ: Այսպիսով, ներկայացնում ենք լրացուցիչ տվյալները՝ ցույց տալու համար, որ Ամուլսարի ոսկու նախագիծն այդ տեսակի բնակմիջավայր է, և այդ տեսակի հայտնաբերումը պետք է լինի նոր հանգամանք ԲՄԱԳ ընթացակարգի համար.

- Մշտական հանձնաժողովի բնակմիջավայրերի պահպանմանն առնչվող դրույթների մասին 1-ին փանաձևի 1-ին պարբերության ա) ենթակետի համաձայն (1989թ.) (ընդունվել է Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողովի կողմից 1989թ. հունիսի 9-ին)՝ «Որևէ տեսակի (*կամ պոպուլյացիայի*) «բնակմիջավայրը» նշանակում է շրջակա միջավայրի ոչ կենսունակ և կենսունակ գործոնները, *անկախ այն փաստից, թե բնական են, թե փոփոխված, որոնք էական են կյանքի և այդ տեսակի անդամների (կամ պոպուլյացիայի) բազմացման համար, և որոնք տեղի են ունենում տեսակի (կամ պոպուլյացիայի) բնական աշխարհագրական արեալում:*
- ԵՄ բնակմիջավայրերի դիրեկտիվայի²⁷ 1-ին հոդվածի գ ենթակետի համաձայն՝ «Տեսակի բնակմիջավայրը նշանակում է կոնկրետ անկենսունակ և կենսունակ գործոններով սահմանված շրջակա միջավայր, որտեղ տեսակն ապրում է իր կենսաբանական ցիկլի որևէ փուլում»:
- Ամուլսար լեռան տարածքը իդեալական բնակմիջավայր է ՀՀ կարմիր գրքի համաձայն և «Butterfly Conservation Armenia» կայքում գրված է²⁸. «Հայաստանում այս տեսակը ցուցադրում է կցկտուր տարածվածություն հիմնականում Հայաստանի կենտրոնում և հարավում, որտեղ այն հիմնականում ապրում է մերձալպյան մարգագետիններում և խոտածածկ լանջերի վրա: Ծաղկունյաց լեռներում (կենտրոնական Հայաստան) այն նաև բնակվում է տերևաթափվող անտառների վերին գոտում: Այս տեսակի կողմից զբաղեցրած արեալը ծ.մ. 1800-2800 մետր բարձրության վրա է»: Ավելին, տեսակի քարտեզը ընդգրկում է նաև Ամուլսար լեռը: Վերկայքի հեղինակներից մեկը նույնպես մասնակցել է ԲՄԱԳ-ի ուսումնասիրություններին:
- Ապոլլոն թիթեռի հյուրընկալ բույսերը, *Sedum* and *Sempervivum* species, լայնորեն տարածված են Ամուլսարում: ԲՄԱԳ-ի էնդեմիկ բույսերի մասին ելակետային ուսումնասիրություններում գրված է (էջ 4.10.23). «Մի շարք տեսակներ ազդեցության ներքո գտնվող բուսականության տեսակների շարքում էնդեմիկ բույսեր են տարածաշրջանում՝ կամ անդրկովկասյան (ԱԿ) կամ կովկասյան (Կ): *Fragh Potentilla porphyrantha* բույսից,

²⁷ <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX%3A31992L0043>

²⁸ <https://www.butterfly-conservation-armenia.org/parnassius-apollo.html>

ուսումնասիրությունների ընթացքում գրանցված էնդեմիկ բուսատեսակները ներառում են հետևյալ 21 տեսակները. (...) *Hylotelephium caucasicum* (Grossh.) H. Ohba (= *Sedum caucasicum* (Grossh.) Bor.)(C), *Sedum gracile* C.A. Mey (C), *Sempervivum transcaucasicum* Muirhead (C) (...). Այս տեսակները նույն են, բայց լայնորեն տարածված են լանդշաֆտում, բացառությամբ *Potentilla porphyrantha* բույսից, որը Հայաստանում միայն երեք պոպուլյացիա ունի (տես հաջորդ բաժինը):

- Մենք գրանցեցինք *Parnassius Apollo*-ի միայն մեկ արու առանձնյակ 2018թ. հուլիսի 22-ին Վարդահովիտ գյուղի վերևի մասում գտնվող լեռան վրա՝ ծ.մ. 2595 մետր բարձրության վրա: Տեղանքը՝ N39.92493, E45.44981, 30 կմ հեռավորության վրա է գտնվում Ամուլսարի ոսկու նախագծից և նմանատիպ բնակմիջավայր է՝ լեռնային մարգագետիններ լեռնային ելքերով:



Ապուլլոն թիթեռ, 22.07.2018, Վարդենիսի լեռնաշղթա, Վայոց ձորի մարզ



Ապոլլոն թիթեռի բնակմիջավայր, 22.07.2018թ., Վարդենիսի լեռնաշղթայից վեր, Վայոց ձորի մարզ

ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ 5. Արփա գետի աղտոտումը և հնարավոր սպառնալիքները ջրային էկոհամակարգերին

Արփա գետը աղտոտվել էր Ամուլսարի նախագծի կույտային տարրավազման հարթակի (ԿՏՀ) կառուցման ընթացքում՝ 2018թ. հունիսին, որի մասին 02.10.2018թ. տեղեկացրել են ՄՖԿ չափանիշներին համապատասխանության հարցերով խորհրդական-օմբուդսմենին²⁹: Աղտոտումը առաջինը նկարահանվել է սիրողական տեսագրությամբ,³⁰ իսկ այնուհետև ՀՀ քաղաքացիները ահազանգել են ՀՀ պետական մարմիններին: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեղեկատվության համաձայն՝ «Լիդիան Արմենիա» ընկերությանը պատկանող տարածքից մակերեսային ջրերի արտահոսքի մասին ահազանգի հիման վրա Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժինը անցկացրել է ուսումնասիրություն և դիմել է «Լիդիան Արմենիա» ընկերությանը՝ պարզելու, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկվել՝ մշակելու ուսումնասիրության առարկա հանդիսացող ջրի հոսքերի կառավարման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ընկերությանը կառավարել տեղումների արդյունքում առաջացած ջրային հոսքերը: Տեսչական մարմնին

²⁹ http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/CAOCompliance_MonitoringReport_Lylian_Armenia-01and02_10022018.pdf

³⁰ <https://goo.gl/9ZSudQ>

ընկերության կողմից ներկայացված գրավոր բացատրությունների համաձայն՝ «Արևածուկ» ձկնաբուծարանում սատկել է 150 ձուկ»։ (Գրություն 16.1/111/511-18 2018թ. նոյեմբեր 2)

Ընկերության գրավոր բացատրությունները հաստատեցին, որ Արփա գետի աղտոտումը կապված է Ամուլսարի ոսկու նախագծի շինարարության հետ։

«...Առատ տեղումների հետևանքով «Լիդիան Արմենիա» ընկերության հանքի տարածքում ձևավորվել են մակերեսային ջրեր, որոնք պարունակում են մեծ թվով կախյալ մասնիկներ։ Այս ջրային հոսքը խառնվել է Արփա գետի հետ և հասել «Արևածուկ» ձկնաբուծարան։ Ընկերությունը հրավիրել է ձկնաբանների ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտից իրավիճակն ուսումնասիրելու նպատակով, որի արդյունքում 150 ձուկ է սատկել։ Արդեն իսկ մշակվել է մեխանիզմ ընկերության տարածքից ջրահոսքերի կառավարման համար, որոնք թույլ չեն տա հետագա աղտոտում։ Որպես միջանկյալ լուծում՝ «Արևածուկ» ձկնաբուծարանից ջրահոսքերի ընթացքը շեղելու համար խողովակաշարը շարժական է և կկիրառվի միայն ուժեղ անձրևների ժամանակ՝ գետի հունի փոփոխման պահանջներին համապատասխանելու համար»։

(Գրություն Հ/Ա-2018/59, 19.06.2018թ.)

Մեր այցի ժամանակ մենք ֆիքսեցինք մի խողովակ՝ տեղադրված «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից, Արփա գետի ձախ վտակի բնական հոսքը փոխելու համար, որի վրայով կառուցված է ԿՏՀ-ն։ Այս վտակի հոսքը ժամանակավոր է, բայց ուժեղ անձրևներից կամ ձնհալից հետո ջուրը կտրուկ շատանում է։ ԲՄԱԳ-ում չեն քննարկվել Արփա գետի աղտոտման, Արփա գետի վտակի ջրի հոսքի փոփոխման միջոցառումների և ջրի հոսքի ու որակի փոփոխման հետ կապված այլ ռիսկերը։ Հետևաբար, Արփա և Որոտան գետերի հետ կապակցված ձկները, թռչունները, երկկենցաղները, սողունները, անողնաշարները, և ջրասամույրներն ընդհանրապես չեն ուսումնասիրվել։ Ծրագրի ազդեցությունները «Էմերալդ տարածքների» վրա՝ «Ջերմուկ տարածք» (AM0000009), «Տաթև տարածք» (AM0000016), «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ (AM0000012), «Սևան» ազգային պարկ (AM0000002) և «Գորհայք տարածք», ընդհանրապես չեն ուսումնասիրվել նախքան շինարարության թույլտվություն տրամադրելը։



Կառուցված ԿՏՀ-ն Արփա գետի ձախ վտակի վրայով, հոկտեմբեր 2018թ.



«Լիդիան Արմենիա» ընկերության կողմից տեղադրված խողովակի վերին հատվածը



«Լիդիան Արմենիա» ընկերության կողմից տեղադրված խողովակի ստորին հատվածը՝ ուղղելու ջուրն անմիջապես Արփա գետ

Այս ստացված արդյունքը ևս մեկ նոր հանգամանք է, որը պահանջում է ՇՄԱԳ գործընթացի վերսկսում, ինչպես նախատեսված է Բեռնի կոնվենցիայով և եվրոպական օրենսդրությամբ՝ Բնակմիջավայրերի և ՇՄԱԳ դիրեկտիվաներով (որը պետք է ներդաշնակեցվի ՀՀ օրենսդրության հետ՝ ըստ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի): Ամուլսարի ոսկու նախագծի հաստատման մասին որոշումից հետո իրական իրավիճակը ցույց է տալիս գնահատված ազդեցությունների և դրանք նվազեցնելու միջոցառումների պակաս: Այն փաստը, որը «Լիդիան Արմենիա» ընկերությունը որոշ միջոցառումներ է այնուհետև ձեռնարկել, որևէ բան չի փոխում. գոյություն ունի, այսպես կոչված, իրավական որոշակիության սկզբունք (ՄԻԵԴ-ը բազմաթիվ դատավճիռներ ունի դրա վերաբերյալ): ՇՄԱԳ գործընթացը նախատեսված է ապահովել աղտոտման կանխումը, սակայն ԲՄԱԳ-ում չկան պլանավորված միջոցառումներ, չկա իրավական որոշակիություն, որ դրանք կկանխվեն: Ավելին, չկա իրավական որոշակիություն, որ «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից ձեռնարկված «միջոցառումները» բավարար են այդ ուղղությամբ: Ինչպես կարող ենք տեսել նկարներից, չի թվում, որ խողովակը կարող է կանխել աղտոտված ջրի հոսքը Արփա գետ:

Եթե Ամուլսարի ոսկու նախագծի շինարարության փուլում արդեն իսկ աղտոտվել է Արփա գետը, ի՞նչ տեղի կունենա, երբ ցիանիդը կսկսվի կիրառվել կույտային տարրավազման հարթակում, որը տեղակայված է գետի վտակի վրա՝

բարձր սեյսմիկ գոտում: Ռիսկերի մանրամասն գնահատումը՝ կապված ցիանիդի տեղափոխման, օգտագործման և պահպանման հետ, չի իրականացվել ԲՄԱԳ-ում: Բայա Մարեի ցիանիդային արտահոսքը Ռումինիայում՝ 2000թ. «Աուրուլ» ոսկու հանքարդյունաբերական ընկերության կողմից կառուցված պատվարի փլուզումից հետո, անվանվել է Եվրոպայի վատթարագույն բնապահպանական աղետը Չեռնոբիլի աղետից հետո³¹: Ցիանիդի արտահոսքը Ղրղրգստանում Կումտորի հանքի բեռնատարի վթարից հետո վատթարագույն աղետներից մեկն էր Կենտրոնական Ասիայում³²: 2018թ. մարտի 11-ին կանադական «First Majestic Silver Corp» հանքարդյունաբերական ընկերությունից արտահոսեց 200 լիտր ցիանիդային լուծույթ Փիաքսթլա գետ՝ Դուրանգո, Մեքսիկա: Լուծույթի արտահոսքը, որը պարունակում էր մոտ 100-ից 180 մգ ցիանիդ, ակնհայտորեն տեղի ունեցավ, երբ բլրի վրա մահացու քիմիկատը տեղափոխող բեռնատարի վառելիքը վերջացավ»:³³

³¹ <http://news.bbc.co.uk/2/hi/europe/642880.stm>

³² <https://www.rferl.org/a/1088817.html>

³³ <http://www.lapoliticaeslapolitica.com/2018/04/after-cyanide-spill-can-first-majestic.html>